



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 դեկտեմբերի 2016 թվականի N 1222 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 1406-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաս-
տանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **ո ր ո շ ու մ է**,

1. Դադարեցնել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմա-
կերպության Մեղրու տարածքային ներկայացուցչության գործունեությունը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002
թվականի օգոստոսի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N
1406-Ն որոշման N 4 հավելվածի 25-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի
կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա
ժամկետում «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության

տնօրենի հետ լուծել սույն որոշման 1-ին կետում նշված ներկայացուցչության կողմից զբաղեցված տարածքի անհատույց օգտագործման պայմանագիրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. դեկտեմբերի 2
Երևան



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ